ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

0025, ք. Երևան, Նալբանդյան 130, գործավարություն, հեռ. 596-125

№ 27/1225 «03» 11 2023 թ.

«ԱՁ Անուշ Պետրոսյան»
(ՀՎՀՀ 49557658)
ՀՀ ք. Երևան , Արշակունյաց 5:
էլ. հասցե՝ ga-c@mail.ru

ԾԱՆՈՒՑՈՒՄ

Պայմանագիրը մասնակի միակողմանի լուծելու մասին

ՀՀ ՆԳՆ և ԱՁ Անուշ Պետրոսյանի միջև 11 հոկտեմբերի 2023թ.-ին կնքված թիվ ՀՀ ՆԳՆ ԳՀԾՁԲ-ՍԵՐՎԵՐ/2023/Հ-70 ծածկագրով գրասենյակային հաշվողական սարքերի և սերվերների պահպանման և վերանորագման ծառայությունների ձեռք բերման գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) շրջանակներում ԱՁ Անուշ Պետրոսյանը ծառայության պայմանագրային ընդհանուր 15 000 000 (տասնհինգ միլիոն) ՀՀ դրամ գումարից 2 111 127,696 (երկու միլիոն հարյուր տասնմեկ հազար հարյուր քսանյոթ ամբողջ վեց հարյուր իննսունվեց) ՀՀ դրամ գումարի ծառայությունները մատուցել է պատշաճ կերպով: Ծառայությունների մնացած մասով ԱՁ Անուշ Պետրոսյանը ստանձնած պարտավորությունները չի կատարում, մասնավորապես՝ ծառայությունները մատուցվում են ոչ պատշաճ, թերի և ուշացումներով:

Համաձայն Պայմանագրի 2.1.3-րդ կետի Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել Պայմանագիրը, եթե Մատակարարը էականորեն խախտել է Պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝ մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին կամ/և խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ.-ի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 33-րդ կետի 17-րդ ենթակետը և Պայմանագրի 7.9-րդ կետը՝ ՀՀ ՆԳՆ-ն մասնակի միակողմանի լուծում է ՀՀ ՆԳՆ և ԱՁ Անուշ Պետրոսյան միջև 11.10.2023թ.-ին կնքված թիվ ՀՀ ՆԳՆ ԳՀԾՁԲ-ՍԵՐՎԵՐ/2023/Հ-70 ծածկագրով Պայմանագիրը:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ Պայմանագիրը կհամարվի մասնակի միակողմանի լուծված՝ սույն ծանուցումը Պատվիրատուի կողմից տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրվանից:

ԱՁ Անուշ Պետրոսյանին տրվում է 5 օրացուցային օր պայմանագրի չկատարած մասով տուժանքով սահմանված գումարներ՝ 2 250 000 / երկու միլիոն երկու հարյուր հիսուն հազար / ՀՀ դրամ որակավորման ապահովման գումարից 1 933 330,8 / մեկ միլիոն ինը հարյուր երեսուներեք հազար երեք հարյուր երեսուն ամբողջ ութ / ՀՀ դրամ և 1 500 000 / մեկ միլիոն հինգ հարյուր հազար / ՀՀ դրամ պայմանագրի ապահովման գումարից 1 288 887,2 /մեկ միլիոն երկու հարյուր ութսունութ հազար ութ հարյուր ութսունյոթ ամբողջ երկու/ ՀՀ դրամ ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչության N900005000758 հաշվեհամարին փոխանցելու նպատակով: Վճարման կտրոնների բնօրինակներն անհրաժեշտ է ներկայացնել ՀՀ ՆԳՆ՝ ք. Երևան Նալբանդյան 130 հասցեով:

Սահմանված ժամկետում գումարները չվճարելու դեպքում ԱՁ Անուշ Պետրոսյանին «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով, ընկերության տվյալները կներկայացվեն լիազոր պետական մարմին, իսկ Մատակարարի կողմից Պայմանագրի շրջանակում ներկայացված տուժանքի մասին համաձայնագրերը՝ պայմանագրի ապահովում և որակավորման ապահովում, սահմանված կարգով, կներկայացվի «Ամերիաբանկ» ՓԲԸ վերոնշյալ գումարները գանձելու և ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչության N900005000758 հաշվեհամարին փոխանցելու նպատակով:

Ա. ՖԻԴԱՆՅԱՆ

<< 03 >> ——11—— 2023թ.

ք.Երևան

Կատարող՝ Հ. Ասատրյան
Հեռ. 010-59-66-32